ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Ոսկանյանի (լիազորագիր, տրված՝ 26.12.2019թ.)

Կ. Մնացականյանի (լիազորագիր, տրված՝ 26.12.2019թ.)

ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝

Հ. Սաղաթելյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

Վ. Քեռոյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

Մ. Բաղդասարյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

Ս. Շախվերդյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

քննելով ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2019թ. ներկայացված (17.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ են ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ», «Տուն Կոմպլեքս», «Էյչ Վի Եյ Սի Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

Հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում Հանձնաժողովը մասնակիցներին ծանուցել է.

«1. «Էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին՝ հայտում բացակայում է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Պատվիրատուն armeps համակարգում չէր կցել Հավելված 1.1/

2. «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում էներգիայի ծախսը սառեցման ժամանակ նշված է 0,84ՎՏ, սակայն Պատվիրատուի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում նշված է 840ՎՏ, խնդրում եմ ճշտել հզորության չափը:

3. «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին՝ մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ներառում է տեղադրման բոլոր ծառայությունները, իսկ հայտում նշված է առանց ավտոաշտարակի:»:

Սահմանված կարգով մասնակիցներին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված փաստաթղթերը:

Բայց չգիտես ինչու հանձնաժողովի անդամների աչքից վրիպել է այն փաստը, որ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ի /առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ երկու չափաբաժինների մակնիշի մասով էլ ներկայացրել է նույն տվյալները /օդորակիչ 9000ԲՏՈՒ, օդորակիչ 12000ԲՏՈՒ հզորություններով/ որը պարզապես հնարավոր չէ:

Հեռախոսազրույցի ընթացքում Ընկերությունը տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղարին և անդամներին ըստ էության շատ կարևոր թերացման մասին: Սակայն, որ հայտում մակնիշի փոխարեն իրականում նշված է BALLU Home VISION PRO բառակապակցությունը, որն ամեն դեպքում չի կարող մակնիշ հանդիսանալ, այն էլ միաժամանակ տարբեր հզորություններով օդորակիչների դեպքում: Բայց հարգելի հանձնաժողովի քարտուղարը և անդամները համառորեն չէին ընդունում Ընկերության կողմից փաստարկված փաստը, դեռ պնդում էին, որ Ընկերության ներկայացրած Հավելված 1.1 թերի է, պահանջելով որ ֆիրմային անվանում սյունակում անպայման նշվի Օդորակիչ և Ֆիրմայի անվանումները, /Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1 1-ին սյունակում նշված է օդորակիչը և ապրանքի մակնիշը, 2-րդ սյունակում՝ ապրանքային նշանը/, բայց այս անգամ նույնպես պահանջը միայն Ընկերությանն էր ուղղված, քանի որ մյուս մասնակիցների շտկված օրինակներում բացակայում է իրենց կողմից խիստ պահանջված ձևը:

Սահմանված կարգով Ընկերությունը պահանջել է ներկայացնել մյուս երկու մասնակիցների կողմից ներկայացված Հավելված 1.1: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցների ներկայացված հայտերի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ հրավերում պահանջվող տեխնիկական բնութագիր 1-ին չափաբաժնի համար եղել է առավելագույն սպառվող հզորություն սառեցման ռեժիմում 2530վտ, տաքացման ռեժիմում 2620վտ,

«ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է սառեցման ռեժիմում 2800վտ, տաքացման ռեժիմում 2900վտ

«Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ն ներկայացրել է սառեցման ռեժիմում 2637վտ, տաքացման ռեժիմում 2784վտ

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն ներկայացրել է սառեցման ռեժիմում 2500վտ, տաքացման ռեժիմում 2600վտ:

Հաշվի առնելով վերը նշված տեխնիկական պարամետրերը ակնհայտ երևում է առկա անհամապատասխանությունը առավելագույն հզորությունների մեջ:

Ընկերությունը հարկ է համարում նշել, որ այլ ընկերությունների համար առավելագույն հզորություն նշված լինելը խոչընդոտ է հանդիսացել և սահմանափակել է նրանց մասնակցությունը ի տարբերություն մասնակից կազմակերպությունների:

Առաջարկվող օդորակիչները չեն ապահովում ավելի տնտեսող, հետևաբար ավելի արդյունավետ աշխատանքային ռեժիմ, ինչն օրենքով ամրագրված է և չպետք է անտեսվի Պատվիրատուի կողմից հայտերի գնահատման արդյունքում:

Ամփոփելով վերը նշվածը՝ Ընկերությունը պնդում է, որ մյուս երկու մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքները չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրերին:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անբավարար գնահատել «Տուն Կոմպլեքս», «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը և մերժել.

2. Կասեցնել սույն թվականի դեկտեմբերի 17-ին ժամը 15:30-ի նշանակված գների նվազեցման բանակցությունները:

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ Ազգային ժողովը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ՝ հայտնելով, որ Պատվիրատուի կողմից մանրամասն ուսումնասիրվել են մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բոլոր գործողություններն իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությանն համապատասխան: Մասնավորապես՝ հրավերով նախատեսվել են «Ա» դասի օդորակիչներ, որոնք ունեն համապատասխան ստանդարտներ, տվյալ դեպքում բոլոր մասնակիցների դասերը համապատասխանել են նշված դասին, բացի «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել նաև առավելագույն հզորության պահանջի մասով մասնակիցների ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ընդգծելով այն, որ տեխնիկական բնութագրով ներկայացրած «առավելագույն սպառվող հզորությունը սառեցման և տաքացման ռեժիմում» արտահայտությունն օգտագործվել է իբրև տերմին, այլ ոչ որպես սահմանափակող դրույթ:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Տուն Կոմպլեքս» և «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. նիստի արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած բոլոր ընկերությունների տեխնիկական բնութագրերը համարվել են ընդունելի և վերջիններս հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ Ազգային ժողովի դիրքորոշումը, «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Տուն Կոմպլեքս» և «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊ ընկերությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն բողոքով վիճարկում է Ընթացակարգի միայն 1-ին չափաբաժնի մասով «Էյչ Վի Ես Սի Սերվիս» և «Տուն Կոմպլեքս» ՍՊ ընկերությունների հայտերը, ուստի սույն բողոքի շրջանակներում անդրադարձ է կատարվում բացառապես Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Էյչ

Վի Ես Սի Սերվիս» և «Տուն Կոմպլեքս» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության հարցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարը 09.12.2019թ. և 10.12.2019թ. (ի լրումն) մասնակիցներին Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցել է հայտում արձանագրված հետևյալ անհամապասխանությունները շտկելու վերաբերյալ. Մասնավորապես՝

- «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի հայտում բացակայում է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտում տեխնիկական բնութագրի ապրանքի տեղադրումը նշված է պղնձե խողովակներով մինչև 3 մ, առանց ավտոաշտարակի: Ինչպես նաև մակնիշի սյունակը թերի է լրացված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2019թ. նիստի արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով ներկայացված «առավելագույն սպառվող հզորությունը սառեցման և տաքացման ռեժիմում» արտահայտությունն օգտագործվել է իբրև տերմին, այլ ոչ թե չափման միավոր և (կամ) սահմանափակող դրույթ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած բոլոր ընկերությունների տեխնիկական բնութագրերը համարվել են ընդունելի և վերջիններս հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է գնման առարկա օդորակիչների տեխնիկական բնութագիրը, որով **առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում նախատեսվել է 2530վտ, տաքացման ռեժիմում՝ 2620վտ:**

«Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1.1 հավելված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում օդորակիչի առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում նշվել է **2637վտ,** տաքացման ռեժիմում՝ **2784 վտ:**

«Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել Հավելված 1.1-ը:

Վերոհիշյալ մասնակիցները Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, այդ թվում՝

«Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի մասով նշվել է, որ բացակայում է Հավելված 1.1-ը, իսկ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի մասով՝ տեխնիկական բնութագրի ապրանքի տեղադրումը նշված է պղնձե խողովակներով մինչև 3 մ, առանց ավտոաշտարակի: Մակնիշի սյունակը թերի է լրացված:

Վերոհիշյալ մասնակիցների կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Կարգի 42-րդ կետի համաձայն ներկայացվել է հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկում: Մասնավորապես՝ «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է Հավելված 1.1-ը, որում օդորակիչի առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում նշվել է **2800 վտ,** իսկ տաքացման ռեժիմում՝ **2900վտ:** Իսկ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից շտկվել են Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված վերոհիշյալ անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող

նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի և «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը (ապրանքի ամբողջական նկարագիր), արձանագրում եմ, որ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում պարամետրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի համանուն պահանջին, քանի որ հրավերով հստակ սահմանվել է սառեցման և տաքացման ռեժիմներում սպառվող հզորության առավելագույն շեմերը (վերին շեմը), ինչը նշանակում է, որ ներկայացվող ապրանքի նշված հատկանիշը չի կարող գերազանցել հրավերով սահմանված **2530վտ և 2620վտ** առավելագույն սահմանները: Միևնույն ժամանակ Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում՝ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից Կարգի 42-րդ կետի համաձայն որպես շտկում ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում ապրանքի առավելագույն սպառվող հզորության չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի վերջինիս հայտը չի կարող գնահատվել բավարար, ուստի գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է:

Ինչ վերաբերում է «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին, ապա վերջինիս ուղղված Կարգի 41-րդ կետով նախատեսված ծանուցման մեջ վերոհիշյալ անհամապատասխանության շտկման վերաբերյալ չի նշվել, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով նշված

անհամապատասխանության վերաբերյալ ծանուցվելու և մասնակցի կողմից Կարգի 42-րդ կետի համաձայն չշտկելու դեպքում միայն մասնակցի կողմից ներկայացված հայտը կարող է գնահատվել հրավերի պահանջներին չհամապատասխանող: Հետևաբար գտնում եմ, որ բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

- Պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը (Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով) գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող.

- Բողոքը «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելուն և մերժելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**